ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության և Վրաստանի Հանրապետության մաքսային կոմիտեի միջև երկու պետությունների սահմանի վրա մաքսային անցակետեր բացելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև սահմանի վրա մաքսային անցակետերի տեղերը որոշելու նպատակով Հայաստանի Հանրապետության մաքսային վարչությունը՝ մի կողմից, Վրաստանի Հանրապետության մաքսային կոմիտեն՝ մյուս կողմից, համաձայնեցին հետևյալի մասին.

1. Անհրաժեշտ համարել Կողմերի մաքսային մարմինների աշխատանքները իրականացնել սույն Համաձայնագրի Հավելվածում նշված անցակետերում: Հավելվածը Համաձայնագրի անբաժանելի մասն է: Հաղորդակցությունը թույլատրվում է միայն այդ անցակետերով:

2. Նշված անցակետերում Կողմերն աշխատում են շուրջօրյա աշխատակարգով և իրականացնում են Հավելվածում նշված հսկողության ձևերը:

3. Հաստատված անցակետերի ցանկում կամ դրանց աշխատակարգին վերաբերող փոփոխությունները հաղորդվում են և համաձայնեցվում նախապես՝ այդ փոփոխությունները ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան երեք ամիս առաջ:

4. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրվելու օրվանից:

Կատարված է Երևան քաղաքում 1993 թվականի մայիսի 19-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և վրացերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հավելված

Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության և Վրաստանի Հանրապետության մաքսային կոմիտեի միջև 1993թվականի մայիսի 19-ին կնքված՝ երկու պետությունների սահմանի վրա մաքսային անցակետեր բացելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության սահմանի վրա մաքսային անցակետերի ցանկ

Հմ.	Մաքսային անցակետի անվանումը	Հսկողության օբյեկտը	Աշխատանքի սկիզբը	Մաքսային անցակետի կարգատեսակը
1	2	3	4	5
1.	«Նինոծմինդա»/ՎՀ/ «Բավրա» /ՀՀ/	Ուղեբեռների և ուղևորների բոլոր տեսակները		ավտոմոբիլային
2.	«Գուգութի» /ՎՀ/ «Գոգարան»/ՀՀ/	Ուղեբեռների և ուղևորների բոլոր տեսակները		ավտոմոբիլային
3.	«Ախքյորփի» /ՎՀ/ «Պրիվոլնոյե» /ՀՀ/	Ուղեբեռների և ուղևորների բոլոր տեսակները		ավտոմոբիլային
4.	«Սադախլու» /ՎՀ/ «Այրում» /ՀՀ/	Ուղեբեռների և ուղևորների բոլոր տեսակները		ավտոմոբիլային
5.	«Սադախլու» /ՎՀ/ «Բագրատաշեն» /ՀՀ/	Ուղեբեռների և ուղևորների բոլոր տեսակները		ավտոմոբիլային
6.	«Ախքյորփի» /ՎՀ/ «Ձիլիզիա» /ՀՀ/	Ուղեբեռների և ուղևորների բոլոր տեսակները		ավտոմոբիլային

Մաքսային բոլոր անցակետերը տեղակայվում են Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության վարչատարածքային սահմաններում:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի մայիսի 19-ից: